

МИНИСТЕРСТВО ОБРАЗОВАНИЯ И НАУКИ
РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ

НАЦИОНАЛЬНЫЙ УНИВЕРСИТЕТ
АРХИТЕКТУРЫ И СТРОИТЕЛЬСТВА
АРМЕНИИ
ЦЕНТР ПО ОБЕСПЕЧЕНИЮ КАЧЕСТВА
ОБРАЗОВАНИЯ



MINISTRY OF EDUCATION AND SCIENCE OF
THE REPUBLIC OF ARMENIA

NATIONAL UNIVERSITY OF
ARCHITECTURE AND CONSTRUCTION OF
ARMENIA

CENTER OF EDUCATION QUALITY
ASSURANCE

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ՃՇՀԱՀ ուսանողների շրջանում Moodle համակարգի կիրառման վերաբերյալ հարցման

1. Նախաբան

ՃՇՀԱՀ Կրթության որակի ապահովման կենտրոնը (այսուհետև Որակի կենտրոն) գործողությունների պլանով նախատեսված՝ կրթության որակի ապահովմանն ուղղված միջոցառումների շրջանակներում՝ ուսումնական տարվա ավարտին հարցում է իրականացրել ուսանողների շրջանում՝ Moodle համակարգի կիրառման վերաբերյալ:

2. Հարցումների նպատակը

Հարցումն իրականացվում է հետևյալ նպատակներով.

ա/ Պարզել, թե ուսանողները որքան^օվ էք բավարարված Moodle-ի հնարավորություններից (ծառայություններից) և որակից:

բ/ Պարզել, թե հիմնականում որ առարկաների համար են է կիրառվել Moodle համակարգը:

3. Հարցման գործընթացի կազմակերպում

Հարցման գործընթացը ներառել է հետևյալ փուլերը.

ա/ հարցաթերթի մշակում, քննարկում և հաստատում.

բ/ հարցվողների (ռեսպոնդենտների) ցուցակի ձևավորում,

գ/ հարցվողներին էլեկտրոնային հարցաթերթերի տրամադրում,

դ/ հարցման արդյունքների ամփոփում և հաշվետվության կազմում:

ա/ Հարցաթերթի մշակում, քննարկում և հաստատում

Հարցաթերթը մշակվել է համալսարանի Որակի կենտրոնի աշխատակիցների կողմից:

բ/ Հարցվողների (ռեսպոնդենտների) ցուցակի ձևավորում

Հարցվողների ցանկը ձևավորվել է ըստ այն խմբերի, որոնցում կիրառվել է Moodle համակարգը:

գ/ Հարցումների անցկացման ընթացքը

- Հարցումն իրականացնելու նպատակով հարցաթերթերի էլեկտրոնային տարբերակը ուղարկվել է հարցվողների համալսարանական էլեկտրոնային հասցեներին: Հարցվողները լրացրել են էլեկտրոնային հարցաթերթերը, որոնք «անանուն» տարբերակով մուտքագրվել են ընդհանուր տվյալների բազա:
- Հարցվողները՝ Որակի կենտրոնի աշխատակիցների կողմից, նախապես տեղեկացվել են անցկացվող հարցման նպատակների, խնդիրների և հարցման մեթոդիկայի վերաբերյալ:

դ/ Հարցման արդյունքների ամփոփում և հաշվետվության կազմում

Հարցումների գործընթացը ավարտելուց հետո, Որակի կենտրոնը՝ վերլուծելով և ամփոփելով հարցման արդյունքները, կազմել է հաշվետվություն:

Ընդհանուր վերլուծություն

Հարցմանը մասնակցել են Կ-63, Է 61-1, Կ-42-1, Կ-43, Ք 65-2, Կ 42-1, Կ-33 խմբերի ուսանողները:

Հարցաթերթիկի՝ որ առարկաների համար էք անցած կիսամյակի ընթացքում օգտվել Moodle ծրագրից, հարցին ի պատասխան ներկայացվել են 7 առարկաներ.

1. Օպերացիոն համակարգեր
2. Ինֆորմատիկա
3. Տվյալների բազա
4. Կազմակերպչական կառավարման համակարգերի ինֆորմացիոն ծրագրային ապահովում
5. Տվյալների բազաների նախագծման տեխնոլոգիաներ
6. Ծրագրավորման հիմունքներ
7. Կառավարման էլեկտրոնային համակարգեր

Ընդհանուր առմամբ կարելի է ասել, որ ուսանողները գիտեն/հիշում են համակարգի օգտագործման համար անհրաժեշտ՝ իրենց գաղտնաբառը: Հարցման մասնակիցների 39%-ը նշել է, որ չի հիշում մուղիի՝ իր գաղտնաբառը, իսկ 61%-ը հիշում է գաղտնաբառը:


Հարցաշարի այն հարցին, թե Moodle համակարգի որ ծառայություններն են ավելի շատ կիրառվել տվյալ առարկայի դասավանդման ընթացքում, ուսանողները տվել են հետևյալ պատասխանները.

1. Առարկայի աշխատանքային ծրագիրը-4
2. Դասախոսություններ-5
3. Գրականության ցանկը-5
4. Բառարանը-1
5. Բլոգը-1
6. Առարկայի նպատակն ու վերջնարդյունքները-3

Ծառայությունների ցանկում ներկայացված մյուս տարբերակները՝ մասնավորապես. թեմատիկ պլանը, տեսական նյութերը, գործնական առաջադրանքներն ու նյութերը չեն ընտրվել և ոչ մի ուսանողի կողմից:

Ընդհանուր առմամբ որքանով եք բավարարված Moodle-ի հնարավորություններից ու որակից հարցին ի պատասխան, հարցման մասնակից ուսանողների միայն 31%-ն է նշել, որ լիովին բավարարված է Moodle-ի ծառայություններից:


Ընդհանուր առմամբ որքանով եք բավարարված Moodle-ի հնարավորություններից ու որակից



Արդյո՞ք Moodle-ը մատչելի է և հեշտ է օգտագործման համար հարցին ուսանողների մեծ մասը դրական պատասխան է տվել:

1. Ոչ-2
2. Այո-12
3. Մեծ մասամբ այո-8


Արդյոք Moodle-ը մատչելի է և հեշտ է օգտագործման համար



Արդյո՞ք դուք վերապատրաստման կարիք ունեք Moodle-ի ծառայություններից առավել արդյունավետ օգտվելու համար հարցին ի պատասխան, ուսանողների 60%-ը նշել է, որ վերապատրաստման կարիք չունի:

1. Ոչ-2
2. Այո-12
3. Մեծ մասամբ այո-8


Արդյո՞ք դուք վերապատրաստման կարիք ունեք moodle-ի ծառայություններից առավել արդյունավետ օգտվելու համար



Կցանկանա՞յի՞ք Moodle ծրագիրն օգտագործել բոլոր առարկաների համար հարցին ուսանողների մեծ մասը դրական պատասխան է տվել:

1. Ոչ-6
2. Այո-16

Կցանկանա՞յի՞ք moodle ծրագիրն օգտագործել բոլոր առարկաների համար



Հարցաթերթը նախատեսում էր նաև այլ նշումների համար նախատեսված հատված, որտեղ միայն մեկ ուսանող նշել է, որ որ ուսանողներին հետևել պետք չէ: